



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
 ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
 ՆԱԽԱՐԱՐ  
 Ա. ՄԻՆԱՅԱՆ  
 «14» 04 2017թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
 ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 39

**Ձեռնարկողը՝**

**<<Էյ Թի Էմ Էս Սոյուզնա>> ՍՊԸ**  
 Բ. Երևան, Վ. Սարգսյան 26/3

**Գործունեությունը՝**

Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի  
 թանգարանացում և հարակից տարացքների  
 բարեկարգման աշխատանքների շրջակա միջավայրի  
 վրա ազդեցության նախնական գնահատման հայտ  
 ՀՀ Արարարի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
 փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի  
 տնօրեն՝

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 39

'14' '04' 2017թ.

**Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի թանգարանացում և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Պատվիրատու՝ <<Էյ Թի Էս Սոլյուշնս>> ՍՊԸ  
Նախագծող՝ <<Էյ Թի Էս Սոլյուշնս>> ՍՊԸ  
Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ  
Գ կատեգորիա  
Տեղադրման վայրը՝ ՀՀ Արարատի մարզ


Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային Բանկից (ՀԲ) ֆինանսավորում է ստացել՝ <<Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի>> (ՏՏԵԶԾ) նախապատրաստման դրամաշնորհային ենթածրագրի (Դրամաշնորհ № TF0A1063) ֆինանսավորման նպատակով:

Ակնկալվում է, որ ՏՏԵԶԾ-ն կհանգեցնի ավելի բարձր տնտեսական աճի և զբաղվածության ապահովմանն այն շրջաններում, որտեղ տեղակայված են զբոսաշրջային ուղղություն հանդիսացող քաղաքները: ՏՏԵԶԾ-ի միջոցառումների նպատակն է կենտրոնանալ համայնքային ենթակառուցվածքի որակի և հուսալիության բարելավման, զբոսաշրջության և ագրոբիզնեսի զարգացման, ինչպես նաև մասնավոր հատվածի ներդրումների ներգրավման նպատակով բարենպաստ միջավայր ձևավորելու վրա:

Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի թանգարանացման և հարակից տարածքների բարեկարգման նախագիծն ընդգրկված է սույն ՏՏԵԶԾ-ի շրջանակներում: Նախատեսվող գործունեության նպատակն է Դվինը որպես պատմական Հայաստանի մայրաքաղաք և պատմամշակութային արժեք ամրակայել ու պահպանել, ինչպես նաև բարելավել, վերականգնել և վերակառուցել հարակից տարածքների ենթակառուցվածքները՝ զբոսաշրջության համար գրավիչ վայր դարձնելու նպատակով:

<<Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի թանգարանացում և հարակից տարածքների բարեկարգում>> նախագիծը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- 1) Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի թանգարանացում՝ ամրակայել, պահպանել Դվինը որպես պատմական Հայաստանի մայրաքաղաք և պատմամշակութային արժեք, ինչպես նաև բարելավել, վերականգնել և վերակառուցել հարակից տարածքների ենթակառուցվածքները՝ զբոսաշրջության համար գրավիչ վայր դարձնելու նպատակով:
- 2) Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի հուշարձանների մասնակի վերականգնում՝ կենտրոնական թաղամասի Մբ. Գրիգոր Կաթողիկե և միանավ եկեղեցիների, պատրիարքական ապարանքի և հարակից կառույցների, բնակելի համալիրի, Արշակունիների գահադահլիճի մասնակի վերականգնման և ամրակայման նպատակով:





3) Հայաստանի հին մայրաքաղաքների թանգարանի շենքի կառուցում՝ Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի հնավայրի տարածքում:

4) Հնավայրի գլխավոր մուտքի հարակից տարածքում իրականացվող աշխատանքներ՝ ավտոկայանատեղի, հեծանիվների կայանատեղի և սպասարկման կենտրոնի կառուցումը (սանհանգույցներ, տոմսարկղ, էքսկուրսավարի սենյակ, աուդիո և վիդիո ծառայություններ, հուշանվերների տաղավար): Այս բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է նաև Հնաբերդ համայնքի տարածքում ավանդական արհեստների և ուտեստների, ինչպես նաև պատմական վերարտադրությունների կազմակերպման վայրերի, ավանդական տնայնագործական, արհեստագործական տարրերի վերականգնումը զբոսաշրջիկների այցելությունը խթանելու համար:

5) Բնակավայրի տարածքում իրականացվող աշխատանքներ՝ Հնաբերդ համայնքի տարածքով դեպի Դվին հնավայր տանող գյուղական ճանապարհի վերականգնում:

Տեխնիկական առաջադրանքի համաձայն կատարվել է Դվին հնավայրի տարածքի մանրամասն ուսումնասիրություններ՝ առաջադրված թանգարանի շենքի, սպասարկման կենտրոնի և կայանատեղի կազմակերպման նպատակով: Կառուցվելիք շինությունների տարածքի ընտրությունը պայմանավորված է նախ և առաջ հնավայրի տեսողական ընկալմանը չխոչընդոտելու, զբոսաշրջիկների սպասարկման հարմարավետությունն ապահովելու, կառույցի նախընտրելի կողմնորոշման, ինչպես նաև շրջակա միջավայրի ներդաշնակության ու հետաքրքիր համայնապատկերներով:


Որպես նախընտրելի տարբերակ է ընտրվել համեմատաբար ավելի բարձր դիրք ունեցող և զբոսաշրջիկների շարժման օղակաձև երթուղու վրա գտնվող տարածքը: Այն գերծ է գրունտային և մակերեսային ջրերից, ինչը կրերի շինարարական աշխատանքների համեմատական էժանացմանը, ինչպես նաև ավելի դյուրին է դարձնում թանգարանից հնավայր տանող երթուղին: Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է կառուցապատել հետևյալ մակերեսներով տարածքներ.

- Դվին թանգարան (տեխնիկական և գրասենյակային տարածքներ, ցուցասրահներ, գրադարան, մատենադարան, լուսանկարների ֆոնդ և այլն) - 455.42մ<sup>2</sup>,
- տուրիստական սպասարկման կենտրոն (տոմսարկղ, էքսկուրսավարի սենյակ, աուդիո և վիդեո ծառայություններ, հուշանվերների տաղավար) - 104.23մ<sup>2</sup>,
- անցուղի - 120.0մ<sup>2</sup>,
- ավտոկայանատեղի (3 ավտոբուսի և 12 մեքենայի համար) - 460.0մ<sup>2</sup>:

Թանգարանի կառուցման շինարարական աշխատանքներից առաջ կատարվելիք պեղումներից արժեքավոր կառույցներ հայտնաբերելու դեպքում կկատարվի նախագծի վերամշակում և դրանք կներառվեն թանգարանի ցուցասրահներում: Սպասարկման կենտրոնը առաջարկվում է տեղադրել ավտոկայանատեղի և թանգարանի շենքի հարևանությամբ՝ այցելուների սպասարկումը ավելի հարմար դարձնելու նպատակով: Հնաբերդ համայնքում, դեպի Դվին հնավայր տանող գյուղական ճանապարհին կից, ընտրվել է համայնքային պատկանելիության հողատարածք (համայնքապետարանին հարակից տարածք), որտեղ նախատեսվում է տեղակայել տեխնիկական առաջադրանքով նախատեսված ավանդական արհեստների և ուտեստների, տնայնագործական և արհեստագործական տարրերի վաճառքի տաղավարներ, հանդիսությունների համար հարթակ, հանրային գուգարան, շվաքարաններ և այլն: Այս տարածքի ընտրությունը պայմանավորված է մի շարք առավելություններով, մասնավորապես՝ Հնաբերդ համայնքի մայրուղուց դեպի Դվին քաղաքատեղի տանող հիմնական զբոսաշրջային ճանապարհին հարող համայնքի կենտրոնական հատվածում գտնվող տեղադիրքով, ինչպես նաև համայնքային սեփականության կարգավիճակով, փոքրիկ պուրակի և ինժեներական ենթակառուցվածքների առկայությամբ, ինչը նպաստելու է ֆինանսական միջոցների խնայմանը:

Հնաբերդ համայնքի տարածքում նախատեսվում են իրականացնել հետևյալ կառուցվածքները.

- ժամանակավոր կարգավիճակ ունեցող տաղավարներ և հանրային գուգարան - 110.0մ<sup>2</sup> մակերեսով,
- հարթակ հանդիսությունների կազմակերպման համար - 506.0մ<sup>2</sup>,
- նստարաններ - 6 հատ,
- պարիսպ-պատ - 37.5մ<sup>2</sup>:





Հնաբերդ համայնքի տարածքներում իրականացվող աշխատանքների կառուցապատման ընդհանուր մակերեսը կկազմի՝ 2790.0մ<sup>2</sup> (1650.0մ<sup>2</sup> + 1140.0մ<sup>2</sup>):

Մայրուղուց դեպի Հնաբերդ համայնք տանող ճանապարհը գտնվում է անմխիթար վիճակում: Ասֆալտապատ ավտոճանապարհի ծածկը քայքայված է և առաջացել են մեծ քանակությամբ փոսեր մինչև 0.3մ խորությամբ: Կան հատվածներ որտեղ երևում է նաև հողային պաստառը: Համայնքում բացակայում են մայթերը: Ջրահեռացումը փողոցից կազմակերպվում է կողային ասբոցեմենտի կիսախողովակներով, որոնք մի շարք հատածներում ջարդված են:

Գյուղամիջյան ավտոճանապարհի երկարությունը մինչև Դվին հնավայր կազմում է մոտ 500.0մ, որը նախատեսվում է վերակառուցել՝ օգտագործելով գոյություն ունեցող ծրագիծը, համապատասխանեցնել այն գործող նորմատիվ հարաչափերի:

Ավտոճանապարհի առաջին հատվածի լուսավորությունը նախատեսվում է իրականացնել նոր սյուներով (նախկինում օգտագործված փայտե սյուների փոխարեն), իսկ մյուս հատվածներում կատարել նորոգման աշխատանքներ, ինչպես նաև ասֆալտապատման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ, ասֆալտով պատվող ճանապարհի մակերեսը կկազմի մոտ 6000.0մ<sup>2</sup>:

Նախատեսվող աշխատանքները (ավանդական արհեստների և ուտեստների, տնայնագործական և արհեստագործական տարրերի վաճառքի տաղավարներ, հանդիսությունների համար հարթակ, հանրային գուգարան, շվաքարաններ, ճանապարհի նորոգում և այլն) իրականացվելու են Հնաբերդ համայնքի վարչական սահմաններում՝ համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների վրա:

Գործունեության համար նախատեսվող ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Հնաբերդ համայնքի ջրամատակարարման ցանցից, իսկ ջրահեռացումն (հանրային գուգարաններ, թանգարան, սպասարկման կենտրոն) կիրականացվի անջրաթափանց սեպտիկ հորերով: Դվին թարգարանի, տուրիստական սպասարկման կենտրոնի և այլ կառույցների ջեռուցումը նախատեսվում է իրականացնել էլեկտրաէներգիայի միջոցով:

Ըստ ներկայացված նյութերի՝ նախատեսվող գործունեության համար որպես շինհրապարակ կարող են ծառայել կառուցապատման համար ընտրված տարածքները (այսինքն Դվին հնավայրի 1140.0մ<sup>2</sup> և 1650.0մ<sup>2</sup> Հնաբերդ համայնքի տարածք): Շինարարական նյութերը (ավազ, խիճ, ցեմենտ և այլն) և նախատեսվող գործունեության ընթացքում առաջացած շինարարական, ինչպես նաև կենցաղային աղբը ժամանակավոր պահվելու են Դվին հնավայրի հարևանությամբ՝ ավտոկայանատեղի համար նախատեսված հարթակում (մակերեսը՝ 460.0մ<sup>2</sup>, որը գտնվում է Հնաբերդ համայնքի վերջնամասում, մոտակա տներից մոտ 160.0մ հեռավորության վրա): Շինարարական աշխատանքների ժամանակ վառելիքի պահեստներ չեն նախատեսվում, շինարարական աղբը՝ մոտ 3.5տ քանակությամբ, նախատեսվում է տեղափոխել Վեդու աղբավայր (պայմանագրային հիմունքներով): Կենցաղային թափոնները՝ մոտ 1.2տ քանակությամբ, համայնքում առաջացող աղբի հետ միասին հեռացվելու են Հնաբերդ համայնքապետարանի կողմից տրամադրված աղբավայր:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախնական գնահատման հայտի փաստաթղթերը, 06.04.2017թ. Հնաբերդ համայնքապետարանում իրականացված քանրային քննարկումների արդյունքները, ինչպես նաև փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվող հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն աննշան, կարճատև և տեղային: Դրանք կներառեն, սակայն չեն սահմանափակվի հետևյալով՝ մակերևութային ջրերի աղտոտում, հողի էրոզիա, որոնք առաջանում են հանված հողի, շինարարական թափոնների ոչ պատշաճ հեռացման/տեղադրման հետևանքով, կառուցման և



վերակառուցման ընթացքում նավթամթերքի, յուղերի հնարավոր արտահոսք, ժամանակավոր շինհրապարակների օգտագործում (շինարարական ճամբարներ, մեքենաների ավտոկայանատեղեր, պահեստավորման վայրեր և այլն), օդի ժամանակավոր աղտոտում՝ կախված շինարարության ընթացքում բեռնատարների ինտենսիվ երթևեկությունից, փոսերի և խրամուղիների փորման ժամանակ տեղի բնակչությանն անհանգստություն պատճառող աղմուկ և վիբրացիա:

Շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող արտանետումները կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից:

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում նախնական գնահատման հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Ըստ հայտի՝ լուծված են կեղտաջրերի հավաքման և հեռացման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի, հնագիտության, ռեկուտիվացիայի, բարեկարգման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև իրականացվող աշխատանքների ծավալները, խախտվող տարածքի փոքր մակերեսը, մշակված բնապահպանական միջոցառումները՝ կարելի է ենթադրել, որ նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա պետք է ունենա կարճատև և նվազագույն ազդեցություն՝ չզերազանցելով սահմանված նորմերը:

### Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած շինաղբը (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Անհրաժեշտ է շինանյութերի և թափոնների տեղափոխումն իրականացնել փակ ծածկ ունեցող բեռնատար ավտոմեքենաներով՝ համայնքի և հարակից բնակելի տարածքում փոշու արտանետումները նվազեցնելու համար:
5. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել և ավարտել օրվա սահմանված ժամին՝ բնակելի տարածքներում աղմուկի և առավելագույն բեռնվածությամբ աշխատանքային ժամերի ավելացումից խուսափելու համար:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս>> ՍՊԸ կողմից ներկայացված Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի թանգարանացում և հարակից տարացքների բարեկարգման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ՝



Կ. Մովսիսյան